

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Օբյեկտիվ իրականության մեջ յուրաքանչյուր իր, երևույթ օժտված է բազմաթիվ հատկություններով և հարաբերություններով, որոնք արտացոլվելով մեր գիտակցության մեջ և համապատասխան լեզվական ձևակերպում ստանալով, վերածվում են փաստերի: Դրանք գիտական տեսության մեջ նկարագրվում են, մեկնաբանվում և բացատրություն ստանում: Ցանկացած նկարագրություն պատկերացում է տալիս դիտարկվող օբյեկտի մասին, այսինքն՝ կարող է դիտվել որպես մեկնաբանության կամ գիտական բացատրության էքսպլանանդում (բացատրվող), իսկ մեկնաբանությունը որպես գործընթաց համընկնում է գիտական բացատրության էքսպլանանսի (բացատրողի) որոնման փուլի հետ¹: Փաստերի նկարագրությունը ցույց է տալիս միայն այն, թե ինչի է նման տվյալ իրը կամ երևույթը՝ համապատասխանաբար պատասխանելով «ի՞նչ է սա» հարցին, այն դեպքում, երբ մեկնաբանության ժամանակ փորձ է արվում պարզել տվյալ փաստի նշանակությունը մեզ համար՝ «ի՞նչ է սա նշանակում»: Իսկ պարզել տվյալ փաստի իմաստը ամենից առաջ նշանակում է այն համադրել այլ փաստերի հետ, ներառել տրամաբանական կամ տեսական կառուցվածքների մեջ, այլ կերպ ասած՝ էքսպլանանդումի նշանակություն տալով փաստին՝ գտնել այն էքսպլանանսը, որը թույլ կտա գիտության համար դեռևս անհայտ այդ փաստը հանգեցնել արդեն հայտնի փաստերին: Հետևաբար, էքսպլանանդումում նկարագրվող փաստը մեկնաբանվելով՝ ընդգրկվում է գիտելիքի կոհերենտ համակարգի մեջ և գնահատվելով այլ փաստերի տեսանկյունից՝ ոչ միայն ձեռք է բերում որոշակի իմաստ, այլև համապատասխանորեն արժևորվում է:

Մեկնաբանության մեթոդի օբյեկտիվ հիմքը պատճառականության սկզբունքն է, քանի որ մեկնաբանության դեպքում միտքը էքսպլանանդումում նկարագրվող երևույթից շարժվում է դեպի դրա առաջացման պատճառներն ու հիմքերը, որոնք արտահայտվում են էքսպլանանսում՝ ընդհանուր օրենքների և տվյալ երևույթի առաջացմանն ուղեկցող պայմանների նկարագրությամբ, որից հետո կրկին վերադառնում է դեպի այդ երևույթը: Բայց մեկնաբանության էքսպլանանսը, ի տարբերություն գիտական բացատրության էքսպլանանսի, լրիվ չէ², այդ պատճառով ձեռք է բերում իմացաբանական և գործառական այլ հնարավորություններ, քան գիտական բացատրությունը:

¹ Տե՛ս Ս. Վ. Վարդանյան, Գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների փոխհարաբերությունների հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2003, № 2, էջ 23:

² Մեկնաբանության մեթոդը տրամաբանական կառուցվածքով նման է գիտական բացատրության մեթոդին, բայց գիտական բացատրության էքսպլանանսը լրիվ է, այսինքն՝ պարունակում է և՛ գիտության օրենքը, և՛ բացատրվող փաստի առաջացմանն ուղեկցող պայմանների լրիվ նկարագրությունը, ինչն ապահովում է գիտական բացատրության ապացուցողական բնույթը:

էքսպլանանսի որոնումը ենթադրում է.

ա. փաստերի որոշակի համախմբից էքսպլանանդումին հարակից կամ նման փաստերի հայտնաբերումը և ընտրությունը,

բ. ընտրված փաստերի հիման վրա այնպիսի ընդհանուր օրենքների որոնումը և հայտնաբերումը, որոնք կարող են էքսպլանանդումում նկարագրված երևույթը կապել էքսպլանանսում նկարագրված երևույթների հետ,

գ. էքսպլանանսի և էքսպլանանդումի միջև բխեցնելիության հարաբերության հաստատում³:

Այս խնդիրն իրագործվում է համանմանության, ինդուկցիայի և արտարկման կիրառությամբ: Եթե համանմանության միջոցով փաստերը համադրվում են, ինդուկցիայի միջոցով՝ ընդհանրացվում, ապա արտարկման շնորհիվ գիտելիքը առարկայական մի ոլորտից տարածվում, տեղափոխվում է առարկայական այլ ոլորտ:

Քանի որ մեկնաբանության էքսպլանանսը լրիվ չէ, նրանում կարող են բացակայել ընդհանուր օրենքները: Այդ դեպքում այն կարող է պարունակել միայն էքսպլանանդումին նման կամ հարակից փաստերը, որոնք ձեռք են բերվում համանմանության շնորհիվ: Վ. Ա. Շտոֆֆը համանմանությունը սահմանում է որպես նմանության հարաբերության և տարբերության հարաբերության, ինչպես նաև նմանության և տարբերության դեռևս անհայտ հարաբերությունների միասնություն⁴: Իսկ Ա. Ի. Ուենովը գտնում է, որ համանմանության տրամաբանական եզրակացությունը հետևյալն է. որոշակի հատկությամբ, որով օժտված է A-ն, օժտված է նաև B-ն⁵: Համանմանության կիրառությամբ ստացվում է համանմանությամբ կառուցված մեկնաբանություն: Օրինակ, եթե հնագետը պեղումների ժամանակ հայտնաբերել է որևէ իր, նա, նկարագրելով այդ իրը, զուգահեռներ է անցկացնում դրա և տվյալ տեղանքում ժամանակային նույն շերտին պատկանող նմանատիպ գտածոների հետ, որից կարող է ենթադրել տվյալ իրի այդտեղ պատրաստված կամ այլ տեղից բերված լինելու մասին: Այդպիսով, համանմանության օգնությամբ գտածոն համապատասխան մեկնաբանություն է ստանում: Նման դեպքերում ենթադրվում է, որ էքսպլանանդումում և էքսպլանանսում նկարագրված փաստերը ընդհանուր հիմքեր կամ պատճառներ ունեն, ինչը, էքսպլանանսում փոխարինելով ընդհանուր դրույթին, թույլ է տալիս էքսպլանանսում պարունակվող ինֆորմացիան արդեն տեղափոխել, արտարկել էքսպլանանդումում նկարագրվածի վրա: Այսպես, ֆիզիկայում լուսային երևույթների և էլեկտրամագնիսական ալիքների միջև նկատված նմանությունից, հատկապես այն փաստից, որ լույսի տարածման արագությունը հավասար է էլեկտրամագնիսական տատանումների տարածման արագությանը, Մաքսվելը եզրակացրեց, որ դրանք ընդհանուր հիմք ունեն: Դա հնարավորություն տվեց նրան էլեկտրամագնիսական ալիքների հատկանիշները արտարկելու լուսային երևույթների վրա և վերջիններիս նոր մեկնաբանություն տալու, որի շնոր-

³ Տե՛ս նույն տեղը, էջ 22:

⁴ Տե՛ս **Штофф В. А.** Моделирование и философия. М., 1966, էջ 140:

⁵ Տե՛ս **Уемов А. И.** Основные формы и правила выводов по аналогии // «Проблемы логики научного познания». М., 1964, էջ 264:

հիվ, մասնավորապես, լույսը սկսեցին դիտել որպես էլեկտրամագնիսական ալիքների հատուկ տիպ: Յետևաբար, համանմանության և արտարկման միջոցով արդեն հայտնի փաստերը միանգամայն նոր մեկնաբանություն ստացան, որի շնորհիվ հիմք դրվեց լուսային երևույթների վերաբերյալ միանգամայն նոր կոնցեպցիայի, և միայն հետագայում լուսային երևույթներին արդեն այդ տեսանկյունից բացատրություն տրվեց:

Արտարկման կիրառությունը ենթադրում է հետևյալ պայմանները. ա) իրականության որոշակի մասի առկայությունը, որի մասին արդեն գիտելիք ունենք, բ) իրականության որոշակի մասի առկայությունը, որը ենթակա է ճանաչողության, գ) այդ երկուսի միջև որոշ նմանության առկայությունը, որը հիմք է տալիս գիտելիքը մեկից մյուսը տեղափոխելու համար⁶: Եթե ընդունենք, որ էքսպլանանդումն նկարագրվում է գիտությանը դեռևս անհայտ և բացատրության ենթակա որևէ փաստ, ապա կարելի է ասել, որ նման էքսպլանանդումն արտացոլում է իրականության այն մասը, որը ճանաչողության ենթակա է: Իսկ էքսպլանանդը՝ բացատրողը, որը պարունակում է էքսպլանանդումին համանման կամ հարակից փաստերը, որոնք գիտությանն արդեն հայտնի են, համապատասխանում է իրականության այն մասին, որի մասին արդեն գիտելիք ունենք: Ստացվում է, որ էքսպլանանսի և էքսպլանանդումի միջև կապն ապահովվում է արտարկման շնորհիվ, որն էլ իր հերթին հիմնվում է համանմանության վրա: Բնական է, որ այս դեպքում թեև գործ ունենք էքսպլանանսից էքսպլանանդումի բխեցման հետ, դրանց կապը տրամաբանական առումով ո՛չ բավարար, ո՛չ անհրաժեշտ համարել չի կարելի, քանի որ խոսքը մասնավորից մասնավորի վրա գիտելիքը արտարկելու մասին է: Յենց այդ պատճառով դա էքսպլանանդումն նկարագրվող փաստի ոչ թե բացատրությունն է, այլ մեկնաբանությունը:

Ինդուկցիայի միջոցով, ըստ էության, ընդհանրացվում են համանմանությամբ ստացված եզրակացությունները, և թեև ինդուկտիվ եղանակով ստացված ընդհանուր դատողությունը մեկնաբանության կազմում կարող է ապահովել էքսպլանանսից էքսպլանանդումի բխեցումը, սակայն հասկանալի է, որ այն որպես ընդհանուր օրենք դիտվել չի կարող, և ինդուկտիվ եղանակով ստացված ընդհանուր դատողության ներգրավումն էսպլանանսի կազմում թերևս կարելի է դիտել որպես առաջին քայլ ընդհանուր օրենքի որոնման ճանապարհին, քանի որ «գիտության օրենքները մշակվում են փորձի և դիտարկման վրա հիմնվող ինդուկցիայի մեթոդի միջոցով: Այդ պատճառով դրանք կարելի է դիտել որպես փաստերի լավագույն մեկնաբանություն»⁷: Իհարկե, այս դեպքում ևս, ինչպես համանմանությամբ մեկնաբանությունների ժամանակ, էքսպլանանսի և էքսպլանանդումի կապն իրագործվում է արտարկման միջոցով: Նման արտարկման դեպքում, որը երբեմն անվանում են ինդուկտիվ արտարկում, նեղ առարկայական ոլորտի մասին եղած գիտելիքը տարածվում է, տեղափոխվում է օբյեկտիվ իրականության առավել լայն առարկայական ոլորտի վրա⁸:

⁶ Տե՛ս **Попова Н. Л.** Экстраполяция как средство научного познания и интегративный фактор в науке. Киев, 1985, էջ 9:

⁷ **Томпсон М.** Философия науки. М., 2003, с. 175.

⁸ Տե՛ս **Асатрян М. В., Ширинян Л. К.** Экстраполяция: сущность и познавательное значение. Ер., 2002, էջ 3:

Մեկնաբանական գիտելիքը հավանական բնույթ ունի: Նրա հավանականության աստիճանը պայմանավորված է էքսպլանանդումի և էքսպլանանսի միջև եղած տրամաբանական կապի բնույթով, որն էլ իր հերթին պայմանավորված է էքսպլանանսի ստացման գործընթացում մասնակցող համանմանության և արտարկման բնույթով: Համանմանությամբ ստացված եզրակացության հավանականության աստիճանը կախված է համեմատվող առարկաների նման և տարբերիչ հատկությունների ընդհանուր քանակից: Որքան շատ են նման հատկությունները, իսկ տարբերիչ հատկությունները՝ քիչ, այնքան համանմանությամբ ստացված եզրակացությունը թեև դառնում է ավելի հավաստի, բայց նաև մոտենում է լրիվ ինդուկցիային և իբրև իմացաբանական-էվրիստիկական ընթացակարգ մասամբ արժեզրկվում է: Արտարկումը ևս ունի իր սահմանը, որում նրա գործարկումն արդարացված է: Քանի որ արտարկման միջոցով հայտնի գիտելիքը տարածվում է իրականության նորանոր բնագավառների վրա, ուստի այն արդարացված է տվյալ տեսության սահմաններում, որից դուրս կիրառվելու դեպքում այն բացահայտում է հայտնի փաստերի ու որակապես լրիվ այլ մակարդակ արտացոլող նոր փաստերի միջև գոյություն ունեցող հակասությունը և դրանք բացատրելու համար նոր օրենքների ու տեսությունների անհրաժեշտությունը: Այդ դեպքում նոր հայտնաբերված փաստերը ստանում են էքսպլանանդումի նշանակություն, իսկ դրանք բացատրող օրենքների ու տեսությունների որոնումը՝ էքսպլանանսի որոնման փուլի նշանակություն, այսինքն՝ դառնում են մեկնաբանություն: Այսպիսով, որակապես այլ մակարդակում գործառնված արտարկումը հիմք է տալիս մեկնաբանության:

Նման դեպքերում, երբ հակասություն է առաջանում նոր գիտելիքի և հին տեսության միջև, մեկնաբանությունը կարող է նոր կոնցեպցիայի առաջադրման հիմքը կազմել, քանի որ էքսպլանանսի որոնման փուլում երբեմն կիրառվող օրենքների ու տեսությունների ճշմարտության մասին համոզմունքը ստիպում է չհայտնաբերված գործոնները փոխարինել երևակայականով և հետագայում փնտրել դրանց կրկնօրինակը: Ուստի, կարելի է ասել, որ էքսպլանանսի որոնման փուլում կարևոր նշանակություն ունի նաև երևակայությունը: Ըստ Լ. Ս. Կորշուովայի, երևակայությունն առաջանում է այն ժամանակ, երբ տրամաբանության օրենքներն իմացության համար դառնում են անբավարար, և թեև այն նույնպես մտային գործունեություն է, սակայն տրամաբանության օրենքներով չի ընթանում⁹: Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով՝ «երևակայությունը առանձին տպավորությունները նույն համադրություններով և նույն ձևերով չի կրկնում, այլ նախկինում կուտակված տպավորություններից կառուցում է նոր շարքեր: Այլ կերպ ասած՝ նորի ներդրումը մեր տպավորությունների ընթացքի մեջ և այդ տպավորությունների փոփոխությունն այնպես, որ այդ գործունեության արդյունքում առաջանում է նոր, նախկինում գոյություն չունեցող պատկեր, ինչպես հայտնի է, այն գործունեության հիմքն է, որը մենք երևակայություն ենք կոչում»¹⁰: Սակայն, ինչպես հայտնի է, երևակայությունը զու-

⁹ Стен Коршунова Л. С. Воображение и его роль в познании. М., 1979, էջ 79:

¹⁰ Выготский Л. С. Развитие высших психических функций. М., 1950, с. 328.

գակցվում է ճանաչողական գործունեության բոլոր ձևերի հետ, ուստի կարելի է ասել, որ գիտական հետազոտության գործընթացում երևակայության շնորհիվ նորովի են կապվում արդեն հայտնի փաստերը՝ ստեղծելով փաստերի նոր շարքեր կամ համադրություններ: Վերջիններս, արդեն նորովի ներառնվելով մեկնաբանության էքսպլանանսի կազմում, հանգեցնում են այլ, լրիվ նոր եզրակացության: Թերևս դրա պատճառով է, որ միևնույն փաստերի ամբողջության տարբեր համադրումով կարելի է ստանալ միանգամայն տարբեր մեկնաբանություններ:

Տրամաբանական միջոցների անբավարարությունը գիտական հետազոտության գործընթացում հաճախ լրացվում է ոչ միայն երևակայության, այլև ինտուիցիայի միջոցով: Ինտուիտիվ գիտելիքը կարող է ներառնվել մեկնաբանության թե՛ էքսպլանանսում, թե՛ էքսպլանանդումում, որի շնորհիվ համապատասխան մեկնաբանություն է ստանում, և թեև ինտուիտիվ գիտելիքը ռացիոնալ գիտելիքի ոլորտին չի պատկանում, սակայն իր տեղը գտնելով մեկնաբանության տրամաբանական կառուցվածքում՝ դրա շնորհիվ ռացիոնալացվում է՝ միաժամանակ ապահովելով մեկնաբանության էվրիստիկական նշանակությունը:

Ընդհանրապես, էվրիստիկական կարելի է համարել այն մեթոդը, որը 1) ապահովում է նոր գիտելիքի ձեռքբերումը, 2) խիստ ալգորիթմ չէ, այլ պահանջում է ստեղծագործական մոտեցում, 3) առաջադրված հիմնախնդիրը լուծելիս հայտնաբերում է գոնե մեկ նոր հիմնախնդիր: Մեկնաբանության մեթոդը լիովին համապատասխանում է այս պահանջներին: Նախ, քանի որ այն համադրում, դասակարգում ու վերադասակարգում և համակարգում է եղած փաստերը՝ դրանց նոր իմաստ և նշանակություն հաղորդելով, դրանով իսկ հնարավորություն է ստեղծում դրանք նորովի արժևորելու համար, իսկ դա ոչ միայն նպաստում է եղածի վերաբերյալ նոր կոնցեպցիա ստեղծելուն, այլև երբեմն առաջին քայլն է լինում մեծ հայտնագործությունների ճանապարհին: Բացի այդ, նոր հայտնաբերված, մինչ այդ գիտությանն անհայտ փաստերը մեկնաբանության մեթոդի օգնությամբ հանգեցվում են արդեն հայտնի փաստերին: Յետևաբար, կարելի է պնդել, որ մեկնաբանությունն իբրև մեթոդ լիովին ապահովում է նոր գիտելիքի ձեռքբերումը: Այն չի կարելի նաև խիստ ալգորիթմ համարել, քանի որ ալգորիթմին բնորոշ են խնդրի լուծման կանոնների միանշանակությունը և արդյունքի կանխատեսելիությունը նույնիսկ յուրաքանչյուր քայլում¹¹: Մինչդեռ մեկնաբանության դեպքում ոչ միայն առանձին քայլերի (որպիսիք կարող են համարվել համանմանությունը, ինդուկցիան և արտարկումը), այլև վերջնական արդյունքի վերաբերյալ սկզբունքորեն անհնար է կանխատեսում անել, որովհետև էքսպլանանսի ոչ լրիվության պատճառով մեկնաբանության նախադրյալները էքսպլանանդումի համար դառնում են անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Ընդհակառակը՝ արտատրամաբանական գործոնների՝ երևակայության ու ինտուիցիայի առկայությունը մեկնաբանական գիտելիքում վկայում է այն մասին, որ համանմանության, ինդուկցիայի և արտարկման հետ մեկտեղ դրանք ևս մեկնաբանական

¹¹ Տե՛ս «Философский энциклопедический словарь». Алгоритм բառահոդվածը: Մ., 1983, էջ 18:

գործառույթ են իրականացնում՝ մեկնաբանության մեթոդի համար ապահովելով ակնհայտ ստեղծագործական մոտեցում: Ընդ որում՝ քանի որ մեկնաբանության մեթոդը իմաստավորում և վերաիմաստավորում, արժևորում և վերաարժևորում է փաստերը, այդ ստեղծագործական մոտեցումը կարող է արտահայտվել հետազոտողի աշխարհայացքային, սոցիալ-մշակութային և այլ պատկերացումներում: Ռա, որոշակի սուբյեկտիվություն հաղորդելով մեկնաբանությանը, թույլ է տալիս մեկնաբանական գիտելիքը դիտել իբրև իմացաբանականի և արժեքայինի միասնություն:

Մեկնաբանության էքսպլանանդումը, որը նկարագրում է գիտությանն անհայտ կամ նոր հայտնաբերված փաստը, այն բանից հետո, երբ մեկնաբանվել է, ինքը կարող է էքսպլանանսի դեր կատարել այլ մեկնաբանության կառուցվածքում, որի դեպքում կստանանք մեկը մյուսից բխող մեկնաբանություններ: Օրինակ, կարելի է շարունակել նախորդ օրինակներից մեկը. հնագետը հայտնաբերել է ինչ-որ իր, որի՝ այդ վայրում գտնված լինելը նա մեկնաբանում է կա՛մ տեղում պատրաստված լինելու, կա՛մ բերված լինելու հանգամանքով: Եթե նա հակված է այն մեկնաբանությանը, որ այդ իրը տեղում է պատրաստված, ապա, տեղում պատրաստված լինելու հանգամանքը դիտելով որպես էքսպլանանս, նա իր առջև դնում է նոր խնդիր՝ պարզել, թե ինչպես է այն պատրաստվել: Այս խնդրի լուծումն իր հերթին էքսպլանանսում՝ տեղում պատրաստված լինելու փաստի և նոր փաստերի համադրումով կարող է նոր մեկնաբանություն դառնալ: Իսկ եթե հնագետը հակված է այն մեկնաբանությանը, որ իրը բերված է այլ տեղից, դա իր հերթին կարող է տեղիք տալ այլ մեկնաբանության՝ գտնված վայրի և բերված վայրի միջև տնտեսական կամ այլ կապերի առկայության վերաբերյալ: Սա նշանակում է, որ նախ՝ մեկնաբանության մեթոդն իրոք առաջադրված հիմնախնդիրը լուծելիս կարող է ի հայտ բերել նոր հիմնախնդիր, և երկրորդ՝ մեկնաբանության մեթոդն ունի գիտելիքի ինտեգրման գործառույթ, քանի որ այլ մեկնաբանության կազմում էքսպլանանդումի դեր ստանձնելու համար տվյալ փաստը պետք է ինտեգրվի էքսպլանանսում ամրագրված փաստերի համակարգում:

Զնայած այն հանգամանքին, որ մեկնաբանության մեթոդի կիրառությամբ կարելի է ստանալ միայն հավանական գիտելիք, այնուամենայնիվ մեկնաբանական գիտելիքն օժտված է մեծ համոզականությամբ: Այդ համոզականության արմատները թերևս պետք է փնտրել մարդկային հոգեբանության մեջ: Նախ, մեծ համոզականությամբ է օժտված նրանում կիրառվող համանմանությունը: Եթե «համանմանությունը նաև նմանության զուգորդումների մի տարատեսակ է, որի հիման վրա մի միտքը կարող է այլ միտք առաջացնել, իսկ որևէ մարդու մոտ ինչ-որ միտք առաջացրած զուգորդումը կարող է մյուսների մոտ ևս առաջանալ»¹², ինչպես կարծում է Ա. Ի. Ուենովը, ապա միանգամայն արդարացված է այդ կարգի գիտելիքի համոզականությունը: Նույնպիսի համոզականությամբ, ըստ Բ. Ռասելի, օժտված է նաև ինդուկցիան: Այդ մասին նա սրամտորեն գրում է. «Մարդը, որ հավին նրա ողջ կյանքում ամեն օր կերակրել է, ի վերջո, փոխանակ կերակրելու, ուրորում է նրա վիզը՝ ցույց տալով, որ միատեսակության վերա-

¹² УЕМОВ А. И., նշվ. աշխ., էջ 251:

բերյալ ավելի կատարյալ տեսակետն օգտակար կլիներ հավի համար: Բայց չնայած այսպիսի ակնկալիքների մոլորեցուցիչ լինելուն՝ դրանք գոյություն ունեն: Լոկ այն փաստը, որ ինչ-որ բան կատարվել է որոշակի անգամներ, պատճառ է դառնում, որպեսզի կենդանիները և մարդիկ ակնկալեն, որ այն նորից կկատարվի»¹³: Սակայն մեկնաբանության համոզականությունը բխում է ոչ միայն նրանում ընդգրկված համանմանությունից և ինդուկցիայից, այլև նրա դեդուկտիվ կառուցվածքից: Թեև մեկնաբանության էքսպլանանսը լրիվ չէ, և էքսպլանանսից էքսպլանանդումի բխեցումն իրագործվում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանների առկայությամբ, այնուամենայնիվ իր դեդուկտիվ կառուցվածքի շնորհիվ մեկնաբանական գիտելիքը դառնում է հիմնավորված, հետևաբար նաև ավելի համոզիչ:

Ե. Պ. Նիկիտինը հիմնավորում է համարում գիտակցության այնպիսի ընթացակարգը, որի ընթացքում երկու իդեալական օբյեկտների՝ հիմքի ու հիմնավորողի միջև այս կամ այն կապի հաստատման ճանապարհով երկրորդին են հաղորդվում առաջինի որոշ բնութագրություններ¹⁴: Փիլիսոփայական հանրագիտարանում հիմնավորումը սահմանվում է իբրև գիտելիքի տրամաբանական ձևերը (պնդումներ, վարկածներ, տեսություններ) որպես գիտելիքի գիտական բաղադրիչ գնահատելու գործընթաց՝ գիտելիքի այդ համակարգի գործառույթներին, նպատակներին և խնդիրներին դրանց համապատասխանության տեսակետից¹⁵: Եթե հիմնավորման վերաբերյալ Ե. Պ. Նիկիտինի բնորոշումն ընդունենք իբրև սահմանում, ապա կարելի է դա համարել չափազանց լայն, ուստի՝ բավականաչափ անորոշ, իսկ փիլիսոփայական հանրագիտարանում բերվածը ընդհակառակը՝ չափազանց նեղ, քանի որ հիմնավորման ընթացակարգն այստեղ սահմանափակվում է գիտելիքի տրամաբանական ձևերով, հետևաբար պետք է ենթադրել, որ դա վերաբերում է միայն տրամաբանական հիմնավորմանը: Այնուամենայնիվ, երկու տեսակետներն էլ հիմք ընդունելով, կարելի է պնդել, որ մեկնաբանության մեթոդն օժտված է գիտելիքի հիմնավորման գործառույթով: Քանի որ մեկնաբանությունն իր էքսպլանանսում արտահայտում է էքսպլանանդումի գոյության անհրաժեշտ պայմանները, ապա դրանով իսկ էքսպլանանդումին հաղորդում է գիտելիքի տվյալ համակարգի նկատմամբ անհրաժեշտության կարգավիճակ, այսինքն՝ ընդգծում է այն փաստը, որ դա գիտելիքի տվյալ համակարգի բաղադրիչն է և որպես այդպիսին համապատասխանում է այդ համակարգի գործառույթներին, նպատակներին, խնդիրներին, հետևաբար կարող է որակվել որպես հիմնավորում:

Մեկնաբանության մեթոդն օժտված է նաև էքսպլիկատիվ գործառույթով, քանի որ նոր փաստերն ինտեգրելով արդեն հայտնի փաստերի համակարգին և դրանց նոր իմաստ ու նշանակություն հաղորդելով՝ հաճախ առաջացնում է նաև եղած հասկացությունները ճշգրտելու, դրանք նորովի սահմանելու անհրաժեշտություն: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝

¹³ Բ. Ռասել, Փիլիսոփայության պրոբլեմները, Եր., 2004, էջ 49:

¹⁴ Տե՛ս Никитин Е. П. Природа обоснования. М., 1981, էջ 27:

¹⁵ Տե՛ս «Философская энциклопедия». Т. 4. Обоснование բառահոդվածը, М., 1967, էջ 110:

Տ. Ի. Օյզերմանը գրում է. «Հասկացության ցանկացած սահմանում, եթե, իհարկե, դա միակ հնարավորը չէ, ..., մեկնաբանություն է, որը լրացվում է այլ մեկնաբանությամբ, այսինքն՝ սահմանումով»¹⁶: Դրան համակարծիք է նաև Յ. Լենկը: Ըստ նրա՝ մեկնաբանությունը, որն իբրև ճանաչողական գործընթաց առկա է իմացության բոլոր մակարդակներում, ի հայտ գալով դեռևս մինչլեզվական մակարդակում, նպաստում է հասկացությունների ձևավորմանը: Լենկն ըստ կատեգորացման աստիճանի առանձնացնում է մեկնաբանության վեց մակարդակներ, որոնցից առաջին երկուսը վերաբերում են մինչլեզվական մակարդակին: Երրորդ և չորրորդ մակարդակներում տեղի է ունենում հասկացությունների ձևավորումը, դասակարգումը և ներառումը որոշակի կատեգորիաներում: Հինգերորդ մակարդակն ավելի հեռուն է գնում՝ օգտագործելով «բացատրական» մեկնաբանությունները, որոնք պատճառների ու հիմքերի որոնման միջոցով հիմնավորվում են իբրև տեսականորեն փաստարկված մեկնաբանություններ: Վեցերորդ մակարդակն ընդգրկում է իմացաբանական և փիլիսոփայական, ինչպես նաև մետատեսական բնույթի մեթոդաբանական մեկնաբանությունները¹⁷: Այսպիսով, կարելի է պնդել, որ մեկնաբանությունն իբրև գիտական հետազոտության մեթոդ գործառնվում է հինգերորդ և վեցերորդ մակարդակներում, թեև որպես իմացության միջոց կարող է դրսևորվել նաև ճանաչողության ավելի ցածր մակարդակներում: Սակայն եթե ճանաչողության ավելի ցածր մակարդակներում այն նպաստում է հասկացությունների ու կատեգորիաների ձևավորմանը, ապա վերջին երկու մակարդակներում, որոնք ակնհայտորեն ընդգրկում են տեսական գիտելիքի բնագավառը, գործ ունենք ոչ միայն ձևավորված հասկացական ապարատի, այլև մեծ մասամբ նույնիսկ սահմանված հասկացությունների, կատեգորիաների ու տերմինների հետ: Բնականաբար, որևէ նոր փաստի մեկնաբանությունն այս պարագայում կարող է ուղղված լինել այդ հասկացությունների, կատեգորիաների կամ տերմինների ճշգրտմանը: Այդ գործընթացը, որն ուղղված է ինտուիտիվ հասկացության փոխարինմանը՝ ճշգրիտ, սահմանված, խիստ հասկացությամբ, Ռ. Կառնապն անվանում է էքսպլիկացիա¹⁸: Հետևաբար, կարելի է ասել, որ մեկնաբանության մեթոդն օժտված է նաև էքսպլիկատիվ հնարավորություններով:

Այսպիսով, գիտական հետազոտության գործընթացում մեկնաբանությունը իրագործում է մի շարք կարևոր գործառույթներ.

- փաստերը համադրելով՝ դասակարգում և համակարգում է գիտելիքը, հետևաբար ունի գիտելիքի համակարգման գործառույթ,
- քանի որ փաստերի ընտրությունն ուղեկցվում է դրանց ինչ-որ իմաստ կամ նշանակություն վերագրելով, այսինքն՝ համապատասխանորեն արժևորելով, ուրեմն օժտված է գիտելիքի արժևորման գործառույթով,
- նոր գիտելիքը ընդգրկում, ինտեգրում է գիտելիքի համապատասխան համակարգի մեջ, ուստի իրագործում է գիտելիքի ինտեգրման գործառույթ,

¹⁶ **Ойзерман Т. И.** Проблемы историко-философской науки. М., 1969, с. 120.

¹⁷ Տե՛ս **Ленк Г.** К методологической интеграции наук с интерпретационистской точки зрения // «Вопросы философии», 2004, № 3, էջ 52-53:

¹⁸ Տե՛ս **Карнап Р.** Значение и необходимость. М., 1959, էջ 37:

– հնարավորություն է տալիս գիտությանն անհայտ կամ նոր հայտնաբերված փաստն արդեն հայտնիին հանգեցնելով՝ ձեռք բերել նոր գիտելիք, ուստի կարելի է ասել, որ օժտված է էվրիստիկական գործառնությով,

– նոր գիտելիքի ինտեգրման ընթացքում դրա և հին տեսության միջև անհամապատասխանության, հակասության դեպքում կարող է նոր կոնցեպցիայի առաջադրման հիմքը կազմել, հետևաբար՝ ունի նաև գիտելիքի կոնցեպտուալացման գործառնությ,

– նոր գիտելիքը ներառելով տրամաբանական-դեդուկտիվ կառուցվածքի մեջ՝ դրանով իսկ հիմնավորում է այն, այսինքն՝ օժտված է հիմնավորման գործառնությով,

– փաստերին նոր իմաստ կամ նշանակություն վերագրելով՝ նպաստում է հասկացությունների ճշգրտմանը, այսինքն՝ իրագործում է էքսպլիկատիվ գործառնությ:

СУСАН ВАРДАНЯН – *Функциональное значение метода истолкования.* –

В статье, исходя из неполноты эксплананса метода истолкования, раскрывается функциональное значение последнего. Рассматривая эксплананс истолкования с точки зрения применения в нем таких логических методов, как аналогия, индукция и экстраполяция, и таких внелогических средств, как воображение и интуиция, автор выявляет следующие функции метода истолкования: систематизация, ценностная оценка, интеграция, концептуализация, обоснование и экспликативность знания, его эвристическая значимость.

SUSAN VARDANYAN – *Functional Significance of the Method of Interpretation.* – In the article an attempt has been made to disclose the functional significance of the method of interpretation on the basis of incompleteness of its eksplanans. Consideration of the eksplanans of interpretation from the viewpoint of applying in it such logical methods as analogy, induction and extrapolation and such non-logical means as imagination and intuition reveals the following features of the method of interpretation: systematization, axiological evaluation, integration, conceptualization, justification and explication of knowledge, its heuristic importance.